

# ՈՒՆԵՐ ԻՐԱԻՈՒՆՔ

Դրամա 4 գործողութեամբ:

Հեղ. Շիրվանզադէի.

1902

## ԳՈՐԾՈՂ ԱՆՁԻՆՔ

Անտօն Բէգմուրեան: Հարուստ կալուածատէր և զանազան առևտրական ընկերութիւնների անդամ: 43 տարեկան:

Հնօսէլի: Նրա ամուսինը: 24—25 տարեկան առողջ, գեղեցիկ կին: Հագնւում է ճաշակով և շքեղ: Սոլոմոն Սուրաթեան: Հերսէլու հալը: 52 տարեկան: Նատալիա: Նրա կինը: 46 տարեկան: Աննա Ալիմքարեան: Հերսէլու ընկերուհին և հասկակիցը:

Ռուբէն Ալիմքարեան: Աննալի ամուսինը: 30 տարեկան: Իլիա Մարտինիչ Մարմարեան: Անտօն Բէգմուրեանի մօտիկ ազգականն ու մտերիմ բարեկամը: 44 տարեկան:

Սուրէն Փրանգուլեան: Անտօն Բէգմուրեանի քեռորդին և գործերի կառավարիչը: 29 տարեկան:

Վարվարէ: Նրա ամուսինը: 26 տարեկան:

Սամսոն: Բէգմուրեանների սպասաւորը:

Վիրժինէ: Նրանց աղախինը:

Ալէքս: Նրանց ամարանոցի պահապանը:

Հիւրենը:

Առաջին եւ երկրորդ գործողութիւնները կատարուած են Բէգմուրեանների քաղաքին մերձակայ ամարանոցում, իսկ երրորդն ու չորրորդը նրանց քաղաքային ընակարանուան:

## ԳՈՐԾՈՂ ՈՒԹԻՒՆ ԸԹԱԶԻՆ

Գեղեցիկ ամարանոցային պարտէզ։ Կննտրդնում երկու միմեանց կից բուսած ծառեր խիտ տեղեւներով։ Դրանց ստուերի տակ թէյի սեղան սպիտակ սփոռցով ծածկուած, շուրջն եղեգնեայ աթոռներ։ Խորքի ամբողչ երկայնումնամբ երկաթէ ցանկապատ, որի մէջ տեղում դռներ կանաչ ներկած։ Դէպի աջ օրրան (hamas), որի վրայ մի բարձ եւ մի անկազմ գիրք։ Ցանկապատից դէն փողոց, յետու թվերով ծածկուած ըլուր, յետոյ միմեանցից բարձր լեռների շարք։ Շատ հեռում մի ճիւնազագամ լեռն, ընդհանրապէս վեհ եւ գեղեցիկ կովկասեան պէյզաժ։

Բեմի աջ կողմը ներկայացնում է պարտիզ շարունակութիւնը։ Այստեղ, ավանցէնայի մօտ դեղնագյն նստարան երկու հոգու համար։

Բեմի ծախ կողմը ներկայացնում է ամարանոցի շինումթիւնը։ Գետնից մի քանի աստիճան բարձրութեամբ քոլորաձեւ պատշզամբ, սքօղուած կանանչ պատառկով։ Դէպի պատշզամբ նայում է շինութեան ծակատը—երկու դռներ, մէկը մէջ տեղում՝ լայն, կամարածեւ, միան աւելի խորը—փոքր։ Առաջին դռների աջ ու ծախ կողմերում լուսամուսներ։

Պարտիզում ամենուրեք ծաղիկներ ու տրօպիզական բուսեր։ Օգոստոսեան կէսօր է։ Արեգակի շողերը տեղ տեղ խաղում նն կարմիր աղիաի փոշով ծածկուած զետնի վրայ, իսկ ընդհանրապէս ծառերի խիտ կանաչը տարածում է թանձը ստուեր։

## ՏԵՍԻԼ I.

ՎԻՐԺԻՆԻ, ԱԼԵՔՈ, ՑԵՏՈՅ ՄԱՐՄԱՐԵԱՆ:

Վարագսյոս քարծրանալիս Ալէքսոն ցնցուղով ջրում  
է աջ կողմի ծաղիկները, ցածր ծայնով երգելով մի  
ժողովրդական երգ: Զախ կողմից, պատշամթից իջնում  
է վիրտինէն ճեռքին մի մեծ արծաթեայ մատուցարան,  
վրէն սուլծի դատարկ զաւաթներ, կարագ, խաշած  
ծուեր եւ այլն: Սկսում է դարսել սեղանի վրայ:

Փոքը ժամանակ երկուան էլ զբաղուած են իրանց  
գործով:

ՎԻՐԺԻՆԻ: Երգիր, երգիր, էն ա բլբուլները հա-  
ւաքուել են ծառի վրայ ու քեզ են ականչ գնում: (Հը-  
ռում է): Դէ լաւ, զահլա մի տանիր, էն Աստուածը...

ԱԼԵՔՈ: Եանի եա, քե հինչ, աղջի...

ՎԻՐԺԻՆԻ: Գլուխ ես ցաւեցնում:

ԱԼԵՔՈ: Եանի եա, խի, քե հմա եմ էգում:

ՎԻՐԺԻՆԻ: Բաս չոլերի համար:

ԱԼԵՔՈ: (Հպարտ) Խանըմի հմա:

ՎԻՐԺԻՆԻ: Էն Աստուածը... (Փրտկալով ծիծա-  
րում է):

ԱԼԵՔՈ: Իա... եանի եա, խի ես ծիծաղում, խանըմը  
սիրիմ ա: Էն օրն էլ էգում էի գլուխս քաշ, մին էլ  
տենամ բալխօնի վրայ կայնած մտիկ ա անըմ: Էն ա  
ուզում էի չուանս հւաքեմ, ամա ասաց, «Էգի էգի, Ա-  
լէքո, լաւ ես էգում»: Ես էլ էգեցի, կէս մանէթ բախ-  
չեց: (Շարունակում է երգել):

Ցանկապատի ետեւում երեւում է Մարմարեանը:  
Միջահասակ, գեղեցկաղէմ, քարի աշքերով տղամարդ  
է, որի դէմքը սակայն կրում է՝ շուայտ անցեալի հետք:  
Կաթուածից նրա աջ թեն ու աջ ոտը թուլացել են:  
Քայլում է թէ ճեռափայտի օգնութեամք, բայց ժիր:

ՎԻՐԺԻՆԵ: ԴԵ լաւ, ձայնդ կտրէր, մարդ է գալիս: ԱԼԵՔՈ: (Գլուխը բարձրացնելով) Աղա չոլախն է, չուաններս հւաքենք: (Երգելով կամաց կամաց հեռանոմ է դէպի աջ եւ աներեւութանում):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Դոների մօտից նայելով Ալէքօի ետեւից) Եվալա, Բաեազէթի տենօր, ձայնդ անսպառ: (Առաջ է զալիս) Վիրժինէ, շուտ ինձ համար բեր ստոր կաթ և զելթերեան ջուր:

ՎԻՐԺԻՆԵ: Աչքիս վլրալ, իլիս Մարտինիչ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Զերանք բնչ են անում: (Նստում է սեղանի քով փայտը ծնորին, զլիարկը զլիին):

ՎԻՐԺԻՆԵ: Են ա աղան գալիս է: (Դնում է դէպի ձախ, պատշզամքի փոքր դռներով):

ՄԵծ դռներից դուրս է զալիս Անտօն Բէզմուրեանը: Նա հագած է սեւ սիւրտուկ, օծիքը ծալած շապիկ, բարակ սեւ փողկապ: Ձեռում պահած է մի քանի լրագիրներ եւ հաշուեթղթեր: Երա ետեւից անմիջապէս դուրս է զալիս Սուրէն Փոանգուլեանը: Դա առողջ, եռանդուն դէմքով երիտասարդ է, որի կնքարանքն արտայայտում է գործնական մարդու ոգի: Հազած է հասարակ պիշակ եւ երկայն կօշիկներ:

## ՏԵՍԻԼ Ա.

ԱՆՑՈՆ, ՍՈՒՐԵՆ ԵՒ ՄԱՐՄԱՐԵԱՆ:

ԱՆՑՈՆ: (Դոների միջից): Այս անգամ խնդիրդ անտեղի եմ համարում: (Խննում է պարտէզ): Այս, Սուրէն, ալդ ինձ դիւր չի գալիս: (Բարեւում է Մարմարեանին բարեկամական անփութութեամբ եւ նստում սեղանի քով, թղթերն ու լրագրները դնելով սեղանի վրայ):

ՍՈՒՐԵՆ: (Համարձակ եւ կտրուկ): Ներիր, քեռի,

ես քեզանից ողորմութիւն չեմ խնդրում, ալ իմ ծառալութեան իսկական վարձը: (Յարգանքով ծեռ է տալիս Մարմարեանին եւ կանգնում սեղանի քով):

Վիրժինէն քերում է սառը կաթ, սիֆօն եւ, մի դատարկ բաժակի հետ դնելով Մարմարեանի առջեւ, յետ է գնում:

**ԱՆՏՈՆ:** (Տաքանալով): Նատ ծանր է ծառալութիւնդ ար: Կան կառավարիչներ, որոնք քեզանից երկու անգամ աւելի են ծառալում և երկու անգամ պակաս ստանում: (Սկսում է նախաճաշ անել):

**ՍՈՒՐԵՆ:** Եթէ ես մենակ լինէի, ամսական հարիւր ըուբլին էլ ինձ համար շատ էր:

**ԱՆՏՈՆ:** Աս, հինգ երեխալ ունիս, չէ: Ես էլ հինգ ալդ էի ուզում լոել: Քսան ու իննը տարեկան հասակում — հինգ երեխալ: Ասա խնդրեմ, ո՞վ է մեղաւոր, որ գու թեթեւամիտ ես:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** (Բաժակը կիսով չափ լցրել է կաթով: Սուրէնին) Երիտասարդ պարոն, բարի եղէք ալդ սիփօնը սեղմելու:

**ՍՈՒՐԵՆ:** (Սեղմելով սիփօնը, լեցնում է Մարմարեանի բաժակը) Զէի կարծում, որ երեխաներ ունենալը թեթեւամտութեան նշան է:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Էվալլա, կեցցեն ուրեմն ինձ նման ամուրիները:

**ԱՆՏՈՆ:** Քեզպէսների համար, ի հարկէ, թեթեւամտութիւն է. քսան ու մէկ տարեկան չըկալիր, գնացիր պսակուեցիր, այն էլ մի աղքատ աղջկալ հետ: Ի՞նչ ես կարծում, խելքը գլխին մարդը պարտաւոր չէ առաջիրան նիւթապէս ապահովել, լետոյ ամուսնանալ:

**ՍՈՒՐԵՆ:** (Հազիւ զապուած հեգնուվթեամը): Իսկ մնչ կը հրամալէիր անել խելքը գլխին մարդուն մինչև ամուսնութիւն:

**ԱՆՏՈՆ:** Ալն, ինչոր անում են ամենքը:

**ՍՈՒՐԵՆԻՆ:** Ներիր, քեռի, ես չէի ուզում առողջութիւնս վտանգի ենթարկել:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** (Նայելով Սուրէնին ցածից վեր ծուռ հայեացքով): Ինչպէս եօ:

**ՍՈՒՐԵՆԻՆ:** Ներեցէք, իմ խօսքը միաւն Փիզիքական առողջութեան մասին չէ:

**ԱՆՏՈՆ:** (Թարկանալով): Սուրէն, դու շատ ես խելքիդ զու տալիս: Իմ կարծիքով, այն մարդիկ են իրանց բարոյականութիւնը վտանգի ենթարկում, որոնք կճեպից դուրս չեկած աշխատում են ճտեր լոյս գցել:

**ՍՈՒՐԵՆԻՆ:** (Գոլնատուելով, սակայն զսպելով իրան) Քեռի, ես ժամանակ չունիմ վիճելու, պէտք է իսկոյն վերադառնամ քաղաք: Հրամալիր, ինչոր ունիս հրամայելու:

**ԱՆՏՈՆ:** (Զսպել է իրան): Գնա, ես արդէն բոլոր պատուելներս տուել եմ:

**ՍՈՒՐԵՆԻՆ:** Ծը տեսութիւն: (Դլուխ է տալիս ու զնում):

**ԱՆՏՈՆ:** Սպասիր:

**ՍՈՒՐԷՆԾԾ:** յետ է նայում:

**ԱՆՏՈՆ:** Յիշեցրու կնոջդ, որ առաջիկալ կիրտկի իմ ամուսնութեան տարեղարձն է: Միասին եկէք, առաւտից:

**ՍՈՒՐԵՆԻՆ:** Ենորհակալ եմ: (Գնում է եռանդուն քայլերով ցանկապատի դռներով):

### ՏԵՍԻԼ III.

**ԱՆՏՈՆ ԵՒ ՄԱՐՄԱՐԵԱՆ, ՅԵՏՈՅ ՀԵՐՍԿԵԼԻ:**

**ԱՆՏՈՆ:** (Վերցնելով սեղանի վրայից մի լրազիր): Մարդու արիւնն են տակն ու վրալ անում ալդ ազգականները:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** (Խորհրդաւոր): Իրանց դառն ճշշ-  
մարտութեամբ:

**ԱՆՏՈՆ:** Եւ գու համաձայն ես նրա հետ:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Կը կամենայի չը համաձայնուիլ  
(Հառաշելով), բայց փաստը շատ ակնյալու է: (Յոյց է  
տալիս իր կաթուածահար կողմը):

**ԱՆՏՈՆ:** Ո՞վ է մեղաւոր, որ գու զգուշ չէիր:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** (Դառն հեգնութեամբ): Իսկ դու  
զգուշ էիր, ի հարկէ: Բայց մի մոռանար, բարեկամս,  
որ ալդ երիտասարդի խօսքը միայն Փիդիքական տառող-  
ջութեան մասին չէր, ալլև բարոյական: Եւ ես ալժմ  
դժուարանում եմ վճռել — ով է մեր երկուսից աւելի ան-  
բարոյական, դու, թէ ես...

**ԱՆՏՈՆ:** (Զբաղտում է Հաշիներով), Ի հարկէ ես,  
որովհետեւ կամեցալ վերջապէս երջանիկ լինել...

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Ծաղրիր, բայց քո բերանով խօսեց  
ինքը ճշմարտութիւնը: (Բեմի ետեւից լսում է ղաշ-  
նամուկի ձայն: Նուազում է ինչ-որ փոթորկալի եղա-  
նակ): Ահ, լսիր, դարձեալ մի և նոյն եղանակը: Լսում  
ես, այդ փոթորկալի հնչիւնների մէջ ես զգում եմ ինչ-  
որ դառն բողոք: Բողոք մաքուր, երիտասարդ հոգու,  
կեղադի և տկարութեան դէմ...

**ԱՆՏՈՆ:** (Հաշիները ղնելով սեղանի վրայ, նայում  
է նրան սուր հայեացքով): Ինչպէս տեսնում եմ,  
սրտիդ վէրքը գեռ չի բուժուել:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Ահ, հերիք է Աստուած սիրես,  
վէրքը վաղուց է մոռացուած: Սլո, ես էի ուզում քո  
օրն ընկնել, բայց կաթուածն ինձ ազատեց: Ես ալնքան  
լիմար էի, որ երեսակալում էի, թէ աշունը կարող է  
գարնան հետ միանալ և կազմել ներդաշնակութիւն:  
Հաւանում էի Ներսէլիին, ալո, ալս քեզլայտնի է: Բայց ինքը  
բնութիւնը սանձահարեց իմ լանդուգն փափագը — ամուս-  
նանալ նրա հետ: Եւ ես ալժմ շատ ուրախ եմ իմ դրու-

**Թեանը:** (Դաշնամուրի նուագումը ընդհատում է): Ա.Հ.,  
ընդհատուեց, Փոլթ չէ, վաղը նորից նոյնը կը նուագուի...

**Ա.ՆՏՕՆ:** Ուրեմն, քո կարծիքով ես երջանիկ ամու-  
սին չեմ:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Ոչ, և երբէք չես կարող երջանիկ  
ամուսին լինել: Հերիք է, Անտօն, ինչքան կոլը եղար,  
բաց արա աչքերդ և տես ինչ անդունդ կալ քո և նրա  
մէջ: Ո՞վ էիր դու երբ ամուսնացար, քառասունին մօ-  
տեցող մի թերմաշ, որի կեանքի սերն արդէն հաւա-  
քուել էր, թթու թանն էր մնացել, իսկ նա տասնութ  
տարեկան երեխալ էր: Էվալլա, դու կին չէիր ուզում,  
այլ զարդ, որով կարողանալիր պարծենալ ուրիշների մօտ:

**Ա.ՆՏՕՆ:** (Աշխատելով հեղնել) Կեցցես, երևելի հո-  
գերան ես: Բաւական է. եթէ ես թոյլ եմ տալիս քեզ  
ինձ հետ համարձակ խօսելու, ալս դեռ չի նշանակում,  
թէ դու իմ համբերութիւնը պիտի հարստահարես քո  
լիմար՝ դատողութիւններով:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Ներիր, ես լափշտակուեցի: Այդ ե-  
րիտասարդի խօսքերը տակն ու վրայ արին իմ մտքերը:  
Լուենք, ահա գալիս է նա...

**ՀԵՐՈԵԼԻ:** (Դուրս է գալիս ծախս կողմի առաջին  
դռներից: Նա մատների ծայրերով քռնած է մի թի-  
թեռնիկ, որին նայում է ուշադիր):

**Ա.ՆՏՕՆ:** (Տեսնելով Հերոէլին, զրարթանոա՞է):

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** (Տեղից քարճրանալով, գլուխ է  
տալիս, նորից նստում, զլիսարկը ղննլով քովի դատարկ  
աթոռի վրայ):

**ՀԵՐՈԵԼԻ:** Բարով, իլիս Մարտինիչ: (Մօտենում է):  
Նայեցէք, ինչ սիրուն թիթեռնիկ է, ինչ քնքոյշ գըլ-  
խիկ ունէ, ինչ տարօրինակ թևեր, մէկը սև, միւսը  
սպիտակ: Բնութեան կապրիզներից մէկը: (Դառնում է  
Անտօնին): Առ հասարակ ես թիթեռնիկներ չեմ սիրում,  
բայց ալս մէկին բռնեցի: Նա թռչոտում էր լուսամը -

տիս վրայ, դիպչելով ապակիներին։ Իսկ ես նրան զբր-  
կեցի ազատութիւնից։

**ԱՆՏՕՆ:** Լաւ բան չես արել։

**ՀԵՐՈԵԼԻ:** Այո, զրկելով նրան ազատութիւնից։  
(Թախծալի ժպտում է) Ճիշդ ես ասում։ Իսկոյն։ (Մո-  
տենում է ծառերին եւ թիթեռնիկը բաց թողնում նրանց  
ետեսում)։ Գնա, բաղդատոր արարած, մի օր ապրիր,  
բայց ազատ ապրիր։

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** (Ամբողջ ժամանակ թագուն դիտում  
է նրան եւ սերթ ընդ սերթ Անտօնին) Արծիւը թևա-  
տրում է...»

**ԱՆՏՕՆ:** Իսկ բնչ են անում իմ թիթեռնիկները,  
Հերոէլի։

**ՀԵՐՈԵԼԻ:** (Վայրկենաբար տիսրելով) Օխ, մի  
հարցնիր։ Ալսօր նրանք ուղղակի անտանելի են։ Մէկին  
հանգստացնում եմ, միւսն է լալիս...»

Վիրժինէն զերում է սրճամանը, դնուա Հեր-  
ոէլու առջեւ եւ գնում։

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Յետոյ երրորդը, և այն ժամանակ  
սկսում է սքանչելի տրիօն։ Եվալլա, իսկ իմ սալօնում  
տիրում է պօէտիքական անդորրութիւն։

**ՀԵՐՈԵԼԻ:** Ախ, իլիս Մարտինիչ, երբեմն ես նա-  
խանձում եմ այն մարդկանց, որոնք ընտանեկան հոգ-  
սերից ազատ են։

**ԱՆՏՕՆ:** Դու այնպէս ես ասում «ընտանեկան հոգ-  
սեր», որ կարծես շատ ես ծանրաբեռնուած նրանցով։  
Խօմ, փառք Աստծու, իլիսան տան մարդ է, տեսնում է  
ինչպէս եմ քեզ պահում։

**ՀԵՐՈԵԼԻ:** Այո, իլիս Մարտինիչին ամեն բան  
յալտնի է...»

Մարմարեանն ու Անտօնը հայեցքներ են  
փոխանակում։

**ՀԵՐՈԵԼԻ:** (Դնելով ամուսնու առջեւ մի գաւաթ

սուրծ) իլիս Մարտինիչ, գուցէ ալսօր բացառութիւն անէք և մի գաւաթ սուրճ խմէք:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Եթէ ուզում էք ինձ պատժել—ու-  
րախութեամբ կը խմեմ:

ՀԵՐՍԵԼԻ: Ուրեմն արգելուած է անպայման: (Ա-  
ծում է իր համար մի զաւաթ սուրծ):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Անպայման և անեն խմիչք, բացի  
կաթից:

ՀԵՐՍԵԼԻ: Ես կարծում եմ, ալդ շատ ձանձրալի  
պիտի լինի աղամարդի համար: (ԽՄՈՒՄ է):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ալո, մանաւանդ ինձ համար: Ես  
մի ժամանակ շատ էի սիրում սև սուրճը և յաճախ  
խմում էի սառցուած շամպայնի հետ անանասով:

ՀԵՐՍԵԼԻ: Սուրճը շամպայնի հետ—առաջին ան-  
գամն եմ լսում: Պէտք է փորձել:

ԱՆՏՕՆ: (Զբաղուած է հաշուեթղթերով) Ալդ շատ  
վնասակար խմիչք է:

ՀԵՐՍԵԼԻ: Դու էլ ամեն բան վնասակար ես հա-  
մարում. սուրճն առանց կաթի, ծխելը, գիշերներն ուշ  
քնելը, ընթրելը:

ԱՆՏՕՆ: Ալդ բոլորից ես վաղուց եմ կշտացել:

ՀԵՐՍԵԼԻ: (Հեգնօրէն ծիծաղնլով) Կշտացել ես...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Անտօնը մի փոքր զբարտեց իրան:  
Մեր ընկերական զրջանում նա լալտնի է եղել իւր չա-  
փաւորութեամբ:

ՀԵՐՍԵԼԻ: Ալո, և ճաշակով, չէ:

ԱՆՏՕՆ: (Հաշուելով) Երկու հարիւր լիսուն և եօ-  
թանասուն—երեք հարիւր քսան ուուբլի, միայն պատե-  
րի պատառների համար... թանգ է:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ես օրից օր աւելի ու աւելի հա-  
մոզւում եմ, որ Անտօնի ճաշակը մըցակից չունի:

ՀԵՐՍԵԼԻ: Ա՛խ, հին կավալեր, դարձեալ կօմպ-  
լիմաններ...

ԱՆՏՕՆ: Եօթ հարիւր ըուբլի ներկարարին: Տնաքանդութիւն է...

ՀԵՐՍԵԼԻ: (Դժկամակ) Թող ալդ հաշիւները գոնէ մի կէս ժամ: (Մարմարեանին) Առաւոտից սկսած մի գլուխ ալդ հաշիւներով է զբաղուած:

ԱՆՏՕՆ: Եթէ ես իմ հաշիւներով չը զբաղուէի, դուէլ առաւոտից ինձ չէիր ձանձրացնի քո դաշնամուրի զնգնգնգոցով: Ուրեմն քվիթ ենք...

ՀԵՐՍԵԼԻ: Ուրախութեամբ կազատէի քեզ իմ դաշնամուրից, եթէ իրաւունք տալիր: Ինչ անեմ, որ լամառում ես...

ԱՆՏՕՆ: Աս, դարձեալ հին երգը նոր եղանակով: Հերսէլի, դուրս բեր գլահցդ ալդ ցնորքը: Դու երբէք երաժշտուհի չես կարող դառնալ: Ականջ մի զնիր ուրիշների խօսքին: Նրանք քեզ շողոքորթում են:

ՀԵՐՍԵԼԻ: Ես ուրիշներին չեմ լսում, այլ իմ հոգու ձայնին:

ԱՆՏՕՆ: (Հեզնութեամբ): Եւ ալդ ձայնն ասում է, որ դու տաղմնդ ես:

ՀԵՐՍԵԼԻ: Զը գիտեմ: Զգում եմ միայն, որ եթէ չը շարունակեմ իմ կըթութիւնը, միշտ պիտի դժբախտ լինիմ...

ԱՆՏՕՆ: (Մի քանի վայրկեան լրելուց յետոյ, հաշիւները հեռացնում է իրանից): Հերսէլի, լսիր ինձ, թող լսի և մեր բարեկամը: Դու խելօք կին ես, կարող ես սառն դատել: Դիցուք, թէ ես քեզ մի քանի տարի ազատութիւն տուեցի, և դու դարձար տաղանդաւոր դաշնակահար, թէկուզ համաշխարհային աստղ, որի մասին աւելի քան կասկածում եմ: Խոկ ես ուր գնամ, ես ինչ անեմ: Պիտի վերցնեմ նօտաներիդ կապոցը և ետեւիցդ ընկած թափառեմ քաղաքից քաղաք իբրև արտիստուհու ամուսին: Պիտի ծաղրի և ծիծաղի առարկա դառնամ իբրև մի կնոջ պոչ: Ոչ, Հերսէլի, ինչ ուզում

ես պահանջիր ինձանից, միայն ոչ ալդ, որովհետև ես ինքնառէր եմ և յարգում եմ ինքնուրոյնութիւնս:

ՀԵՐՄԵԼԻ: (Ոտքի է կանգնել): Իսկ ես ինչ եմ քո կարծիքով, ինքնառիրութիւնից և ինքնուրոյնութիւնից զուրկ մի ողորմելի էակ:

ԱՆՏՕՆ: Դու կին ես:

ՀԵՐՄԵԼԻ: Այսինքն, քո կարծիքով, ոչ առանձին մի անհառ, ոչ մի ամբողջութիւն իւր սեպհական ձըգտումներով ու գաղափարներով:

ԱՆՏՕՆ: Ես քեզ հարիւր անդամ ասել եմ և կըրկնում եմ, որ կինը, մանաւանդ հայ կինը ծնուած է միայն ամուսին և մալր լինելու համար: Ուրիշ կոչում կնոջ համար ես չեմ ընդունում:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Ոտքի է կանգնել եւ հեռուից լսում է, յանդիմանաքար): Անաօն...

ԱՆՏՕՆ: (Գրգորած): Ի՞նչ ես կամենում:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ոչինչ, յետով կասեմ...

ՀԵՐՄԵԼԻ: Որքան ուրեմն ստոր է քո գաղափարը կնոջ մասին: (Յուզուած անցնում է ցանկապատի կողմ եւ նայում հեռաւոր լեռներին):

ԱՆՏՕՆ: (Զայրանալով): Ստոր... Հերսէլի, մի յափշակուր մօդալին գաղափարներով, նրանք պերճախօս են միայն տեսականապէս, իսկ գործնական կեանքի համար փուչ են: Կնոջ համար չի կարող լինել աւելի վեհ, աւելի սուրբ կոչում, քան ալն, ինչ որ սահմանուած է ընութիւնից: Դուրս բեր գլուխդ ալդ ցնորքները:

ՀԵՐՄԵԼԻ: Ալդ դուք, տղամարդիկդ էք, որ ցնորք էք համարում կնոջ ինքնուրոյնութիւնը: Դուք էք նրան ստորացրել մինչեւ ալդ աստիճան: Կինը նոյնպէս անհատ է...

Ցանկապատի ետեսում երեսում է Աննա Ալիմբարեանը:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ով որ է գալիս է:

ՏԵՍԻԼ IV.

ՆՈՑՆՔ ԵՒ ԱՆՆԱ.

ԱՆՆԱ: (Թուկս-թուկս դէմքով կին է, պարզ, բայց  
ծաշակով հագուստած: Ձեւնըն ու շարժումները ազատ  
են, համարձակ, սակայն ոչ զերծ կանացի քնքշութիւ-  
նից: Մէջքին կապած է բարակ գեղեցիկ գօտի, որի  
վրայ քաշ արած է շատ փոքրիկ արծաթեայ դաշոյն:  
Հասնելով դուներին, կանգ է առնում, նայում՝ դէպի  
ներս): Թոլլ տուէք հարցնել ալս է Բէգմուրեանների  
ամարանոցը:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ալս է:

ՀԵՐՍԵԼԻ: (Չը ծանաշելով): Ումն էք կամենում:

ԱՆՆԱ: Գեղ: (Վազում է ներս): Հերսիլիա:

ՀԵՐՍԵԼԻ: (Ծանաշելով): Աննա... Հազիւ ճանա-  
չեցի...

Գրկախառնուում են եւ համըուրեւում:

ԱՆՆԱ: Վերջապէս, եօթ տարի չը տեսնուելուց  
լետոյ:

ՀԵՐՍԵԼԻ: (Ուրախ): Ալո, եօթը տարի: Ալդ որ-  
տեղից, ինչպէս, երբ: Ահա սիւրպըլզ... նստիր... Ահ,  
ներկալացնում եմ, ամուսինս և նրա բարեկամը: Ան-  
տօն, ահա սա է իմ ընկերուհի Սննան, որի մասին ալն-  
քան խօսել եմ քեզ հետ:

Անտօն եւ Մարմարեան յարգանքով գլուխ են  
տալիս:

ՀԵՐՍԵԼԻ: (Աննային): Ե՞րբ ես եկել:

ԱՆՆԱ: Երէկ երեկուեան: Ալսօր իմացալ, որ դու  
ալստեղ ես, շտապեցի գալ քեզ տեսնելու:

(Նստում են):

ՀԵՐՍԵԼԻ: Վերջին ամիսները քեզնից նամակ է-



ստանում, սաստիկ բարկացած էի վրէդ։ Բայց այս մասին յետոյ, առաջ գեռ նախաճաշիր։

**ԱՆՆԱ.** Ես արդէն նախաճաշել եմ մօրաքը ոչս մօտ։  
**ՀԵՐՍԵԼԻ.** Դու նրա մօտ ես իջևանել։

**ԱՆՆԱ.** Այս ոչ, ամուսինս չը կամեցաւ։ Մենք իշխանել ենք հիւրանոցում։

**ՀԵՐՍԵԼԻ.** Դու, հիւրանոցում։ Իմ ամարանոցը թողմած։ Այդ աններելի է։ Անտօն, հրամալիք Սամսոնին, որ իսկոյն գնալ և Աննալի իրերը բերի։

**ԱՆՑՈՆ.** Ուրախութեամբ։ (Ուզում է զնալ)։

**ԱՆՆԱ.** Ոչ ոչ, զնորհակալ եմ։ Ուրենը չի համաձայնուի, երբէք։ Զուր մի անհանգստանաք։

**ԱՆՑՈՆ.** Նստում է եւ շարունակում է հաշիներով զբաղուել։

**ՀԵՐՍԵԼԻ.** Ուրենը, քո ամուսինը և իմ նախկին հարեամնը։ Քանի տարի է ես նրան չեմ տեսել։ Ես համարեա թէ երեխալ էի, երբ նա հեռացաւ Կովկասից։ Շնորհաւորում եմ, սիրելիս, լուսով եմ, որ երջանիկ ես։

**ԱՆՆԱ.** Ես նոյնպէս զնորհաւորում եմ, թէև նամակներով հարիւր անգամ իրարու զնորհաւորել ենք։ (Անտօնին)։ Դուք պէտք է շատ երջանիկ լինեք, որ ունիք Հերսէլիք պէս ամուսին։

**ԱՆՑՈՆ.** Այո, տիկին, ես երջանիկ եմ։ (Նստում է եւ զբաղում հաշիներով)։

**ՄԱՐՄԱՐԵԱՆ.** Ասացէք, խնդրեմ, տիկին, դուք հսկ-գուցեալ բժիշկ Խորէնեանի դուստր չէք, արդեօք։

**ԱՆՆԱ.** Այո, պարոն, դուք նրան ճանաչում էիք։

**ՄԱՐՄԱՐԵԱՆ.** Ինչպէս չէ, լաւ ծանօթներ էինք։ Նաշատ ուսումնասէր մարդ էր, գիտէր գրեթէ բոլոր և ըսպական լեզուները։

**ԱՆՆԱ.** Այո, նա շատ լուսաւոր մարդ էր։ Նա ինձ աւանդել է անպատճառ բարձրագոյն ուսում ստանուլ։

ՀԵՐՄԱՆ (Հառաշելով): Եւ քեզ կը լաջօղուի  
կատարել նրա աւանդը Աննա, քեզ չամեն բան կը լա-  
ջողուի, դու ունիս կամքի ոլժ...

ԱՆՏՕՆ: Հինգ հազար երեք հարիւր ըուբլի հիւս-  
ների... Սարսափելի է... (Զգում է հաշիւները եւ լրա-  
զիր վերցնում):

ԱՆՆԱ: Գիտես, Հերսէլի, ես թողեցի այս տարի  
մանկավարժական կուրսերը, Ալժմ պատրաստում եմ  
մտնել Պետերբուրգի կանանց բժշկական ինստիտուտը...

ԱՆՏՕՆ: (Նկատելու շափ հնգնօրէն): Կը նշանակէ  
դուք ուզում էք լինել ինքնագլուխ, անկախ կին... Է-  
մանսիպասիօն...

(Հերսէլին նայում է նրան յանդիմանաբար):

ԱՆՆԱ: (Կտրուկ): Զէք սխալւում, պարոն Բէգմու-  
րեան, ես ուզում եմ լինել անկախ, և իմ ամուսինն  
ինձ չի արգելում:

ԱՆՏՕՆ: Ալդ, ի հարկէ, գովելի է: Երկի, երեխա-  
ներ չունիք...

ԱՆՆԱ: Առ ալժմ ոչ: Եւ եթէ լինին էլ, չեն իան-  
գարի:

ՄԱՐՄԱՆԵԱՆ: Իսկ ձեր ամուսինն ինչով է պա-  
րապում:

ԱՆՆԱ: Ճարտարապետ է:

ԱՆՏՕՆ: Ալդ լաւ է, ես կը խնդրեմ նրան կազմել  
իմ միւս տան պլանը:

ԱՆՆԱ: Նա առ ալժմ պատուէրներ չի ընդունում:  
Դեռ կատարելագործուում է իւր արուեստի մէջ:

ԱՆՏՕՆ: (Վերցնելով սեղանի վրայից հաշիւներ):  
Էհ, ինձ ներեցէք, տիկին, մի քանի կարեսոր նամակներ  
պիտի գրեմ: (Գնում է պատշզամբ առաջին դոներով):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Երկու ընկերուհիներ եօթ տարի  
չը տեսնուելուց իւտոյ խօսելու շատ բան կունենան:

(Հերսէլուն): Զեր թոլլաւութեամբ գնում եմ անտառի կողմի պատշգամբը:

ՀԵՐՍԻԼԻ: Հրամալեցէք Սամսոնին, որ ձեր բաղկաթոռն այնտեղ տանի:

Մարմարեանը զլուկն է տալիս եւ անցնում պատըշգամբի երկրորդ դոներով:

### ՏԵՍԻԼ Վ.

#### ՀԵՐՍԻԼԻ և ԱՆՆԱ:

Վիրժինէն ներս է մոնում եւ սկսում սեղանի իրերը ժողովել ու տանել, հետաքրքրուած դիտելով Անային:

ԱՆՆԱ: (Աչքերով ուղեկցել է նախ Անտօնին, ապա Մարմարեանին): Այդ պարոնը ամուսնուդ գականն է:

ՀԵՐՍԻԼԻ: Մօրաքրոջ որդին է:

ԱՆՆԱ: Ողորմելի մարդ:

ՀԵՐՍԻԼԻ: Այս, նա հիւանդ է:

ԱՆՆԱ: Տեսնում եմ և գիտեմ... Եւ որքան մեզանում շատացել է այդ տեսակ հիւանդների թիւը: Ինչո՞ւ ես ժպտում, այժմ ես կէս բժիշկ եմ, գիտեմ շատ հիւանդութիւնների լանցաւոր պատճառը: (Սպասելով, որ Վիրժինէն հեռանայ) Հերսէլի (Մօտենում է ու ծեռը թոնում), աչքերիս նալիք: Դու բաղդաւո՞ր ես:

ՀԵՐՍԻԼԻ: (Ծփոթուած): Ինչո՞ւ համար ես հարց-նում:

ԱՆՆԱ: Որովհետեւ դու քո նամակներում ամենազգուշ կերպով ալիդ մասին լրում էիր, մինչդեռ ես իմ մասին ոչինչ չէի թագցնում: Այժմ դու պէտք է բոլորը պատմես, հասկանում ես, բոլորը:

ՀԵՐՍԻԼԻ: (Ցուցամատը յանդիմանազար շարժե-

լով): Աննա, ես զգում եմ, որ նա քեզ դիւր չեկաւ:  
 ԱՆՆԱ: Նա նման է մի հասարակ վաճառականի...  
 Բայց ասա, ինչպէս պատահեց, որ դու նրան ընտրեցիր կեանքիդ ընկեր... Դու ինձ ալս մասին գրեթէ ո-  
 չինչ չես գրել: Ցոյց է տալիս աջ կողմի, ավանցե-  
 նայի մօտի նստարանը): Նստենք ալստեղ և պատմիր:  
 Դու նրան լաւ էիր ճանաչում երբ ամուսնացար:  
 Նստում են:

ՀԵՐՄԵԼԻ: Ես նրան բոլորովին չէի ճանաչում ալն  
 ժամանակ...

ԱՆՆԱ: (Զարմանալով): Ի՞նչ, ուրեմն դու ամուս-  
 նացել ես նրա հարստութեան հետ: Դու, որ միշտ  
 խօսում էիր սիրոյ մասին, դու, հոգով բանաստեղծդ...

ՀԵՐՄԵԼԻ: (Թեթեւ հառաշելով): Լսիր, Աննա,  
 քանի որ ալդպէս հետաքրքրում ես— կը պատմեմ:  
 Ես տասնութ տարեկան չը կալի, երբ, լիշտում ես, ա-  
 ւարտեցինք գիմնազիան: Դու գնացիր եղօրդ մօտ ար-  
 տասահման, իսկ ես մտալ կեանքի մէջ... Ամբողջ մի  
 ձմեռալին սեղօն ես բաց չէի թողնում ոչ մի բազմա-  
 մարդ պարահանդէս, բարեգործական ներկայացում, մա-  
 նաւանդ երաժշտական կօնցերտ: Դու գիտես, որ ես ե-  
 րաժշտութեան սիրահար եմ...

ԱՆՆԱ: Սիրահար: Դու ունիս երաժշտական տա-  
 ղանդ անդամ: Բայց ալդ մասին լետով: Շարունակիր,  
 շարունակիր...

ՀԵՐՄԵԼԻ: Ինձ համար, իհարկէ, հաճելի էր պաը-  
 տել հասարակութեան մէջ: Ես կամաց կամաց սկսում  
 էի ըմբռնել կեանքի իմաստը: Մանօթ երիտասարդների  
 թիւը մեծ էր: Ոմանք մինչև անդամ անտարբեր չէին  
 դէպի ինձ:

ԱՆՆԱ: Իսկ դու անուշադիր սաւառնում էիր ե-  
 թերքում...

ՀԵՐՄԵԼԻ: Յամենայն դէպս ինձ համար տղամարդը  
 1.ՈՒՄՏԱՑ

գեռ գոյութիւն չունէր։ Ես յափշտակուած էի երաժեշտառութեամբ։ Մի երեկոյ իմ ծանօթների շրջանում տեսալ Բէգմուրեանին։ Ամբողջ երեկոյ նա պտտում էր շուրջս և աշխատում գրաւել ինձ։ Նրջապատողներիս շարքում նա աչքի չէր ընկնում ոչ իւր արտաքինով և ոչ զարգացումով։ Իսկ ձևերն անտաշ էին։ Նա ճաշկով հագնուել անգամ չգիտէր։ Նոր հագուստը նրա վրայ նոր չէր երևում։ Մի բան ինձ համար պարզ էր, այն է, որ հայրս նրան շատ է հաւանում։ Ինչ և է, անցաւ ձմեռը, գարունը։ Ամառը մենք ջրերումն էինք։ Հայրս բժշկում էր։ Ես, իհարկէ, Բէգմուրեանին մոռացել էի, Սակալն նորինքը լիշեցրեց իւր մասին։ Մի օր մօրս հետ զրօսնում էինք, յանկարծ նա մեր առաջը դուրս եկաւ, ժամանակ, ուրախ։ Ալնուհետեւ նա ամեն օր մեր տանն էր։ Վերջապէս, բնչ երկարացնեմ, շանցաւ մի ամիս, և ես դարձալ տիկին Բէգմուրեան։ Եւ ահա առաջիկալ կիրակի լրանում է իմ ամուսնութեան վեցերորդ տորին։ Այս է իմ ամբողջ ուօմանը։

Ա. Անն։ Ուրեմն, այնուամենալինիւ, վերջիվերջոյ դու նրան հաւանեցիք։

**ՀԵՐՈԵԼԻ։ (Դրականապլա։)** Ոչ։ Թէ ինչու տուեցի համաձայնութիւնս, չը գիտեմ։ Ես, իհարկէ, ազատ էի ասելու «այս» կամ «ոչ»։ Եւ ես երբէք չեմ մոռանալ մի բան։ այն օրն երբ տուեցի դրական պատասխան, ինձ համար անտանելի օր էր։ Ես տեսնում էի, որ եթէ մերժեմ—պիտի չարաչար վշտացնեմ մօրս։ Նա ինձ չէր ստիպում կամ թախանձում, բայց լուռ, ակնածութեամբ վ հայեցքներով հալածում էր։ Միևնոյն ժամանակ, ես խղճում էի Անտօնին։ Կարճ միջոցում նա սիրահարուել էր ինձ վրայ խելագարի պէս։ Այս, Աննա, ծանր զգացում է աղտմարդին խղճալը, մանաւանդ երբ ալդ տղամարդին ամենքը գովում են։ Ես տեսնում էի, որ ինքս իմ առջև կեղծում եմ, ինքս գիտակցաբար խա-

բում եմ իմ հոգու ձայնին, Բայց և ալնպէս, կամքի ոլժ չունեցալ մի անգամ արտասանած խօսքս յետ վերցնելու։ Նոյն իսկ պսակի երեկոյ, երբ քահանան երրորդ անգամ հարցրեց. «Համաձայն ես,» ես մտածեցի. «զեռուշ չէ, դեռ կարող եմ յետ կանգնել։» Բայց նալեցի մօրս ուրախ դէմքին, Անտօնի երջանիկ երեսին, Աննա, և լեզուս կաշկանդուեց։ Ես ոչինչ չասացի, միայն դլուխս թեքեցի կըծքիս։ Եւ ալդ վայրկեանին մարմնովս անցաւ մի տարօրինակ, մի սոսկալի սարսուռ, Աննա։ (Սեղմում է Աննայի ծեռը ամուր)։

Ա.Ն.Ա.։ Ա.ա, սարսուռ։ (Նայում է Հերսէլիի աշքերին խորհրդասոր) Հերսէլի, ես վախենում եմ քո ապագայի մասին։

Հ.ՐՄԵԼԻ։ (Երեսը ծեռներով ծածկելով) Ոչ, ոչ, Աննա, մի ասա ալդ բանը, մի ասա, Անտօնը լաւ մարդ է... (Վեր է կենում)։

Ա.Ն.Ա.։ Գուցէ նա լաւ մարդ է, բայց դու գոհ չես քո վիճակից, Հերսէլի, իսկ ալդ վտանգաւոր դրութիւն է կնոջ համար։

ՀԵՐՄԵԼԻ։ Լոիր, բաւական է, լսում ես, ես... ես... դժբաղդ չեմ։ Այժմ դու պատմիր քո մասին, Աննա։

Ա.Ն.Ա.։ Իմ պատմութիւնը շատ կարճ է։ Ես վճռել եմ ձեռք բերել բարոյական և նիւթական անկախութիւն, սրպէս զի մեր ամուսնական կեանքի կշիռը չը կորցնի իւր հաւասարութիւնը։

ՀԵՐՄԵԼԻ։ Հասկանում եմ միտքդ, Աննա, որքան խելօք ես, որքան հեռատես... Ես այժմ այն համոզմունքի եմ, որ անբաղդ է այն կինը, որ իւր ամուսնուց բարերարուած է զգում իրան...։

Ցանկապատի ետեսում երեւում է Ռուբէն Ալիմբարեանը։ Նա նրբակազմ է, փոքր ինչ գունատ, քայց առողջ երիտասարդ է մտախոն դէմքով։ Հազած է սեւ պիջակ, նոյն գոյնի վարտիկ, սպիտակ ժիլետ։ Զեւերը

կիրթ են, սակայն ներվային եւ հապճէլու Մինչեւ ցանկապատի դռներից մտնելը քանի մի վայրկեան զիտում է ամառանոցի շրջակայքը:

**ԱՆՆԱ:** Ալդ Բնչ ես կորցրել, որ փնտրում ես, Ոուբէն:

### Տ.ՍԻԼ VI

#### ՆՈՅՆՔ և ՌՈՒԲԻՆ ԱԼԻՄԲԱՐԵԱՆ

**ՌՈՒԲԻՆ:** Մի մանկական դառն լիշտատակ: (Տեսնելով Հերսէլիին, հեռուից զլիսարկը վերցնում է ու մօտենում):

**ԱՆՆԱ:** Հապա, կարող ես ասել, որ այս գեղեցկուհին այն փոքրիկ, նիշար ու դեղնած աղջիկն է...

**ՌՈՒԲԻՆ:** (Սեղմելով Հերսէլիի ձեռող): Որն ամեն անդամ ինձ վըալ ձիւնի գնդակներ էր արձակում իրանց գաւթում:

**ՀԵՐՍԷԼԻ:** Երբ գալիս էիք իմ եղբօր հետ դասեր սովորելու: Ցիշում եմ: Նստեցէք, խնդրեմ: Այն ժամանակ դուք ինձ բարկացնում էիք: Գիտես, Սննա, ինչ էր անուանում ինձ:

Ոուբէնը նստում է Հերսէլիից յետոյ:

**ԱՆՆԱ:** Լսել եմ, փոքրիկ նապաստակ: Որովհետև ամեն անդամ երաժշտութեան ուսուցիչը գալիս դութագնւում էիր դաշնամուրի ետևում, ինչպէս նապաստակը թփի տակ որսորդին տեսնելիս: Զարմանալի չէ, Հերսէլի, որ առաջ ալնպէս փախչում էիր երաժշտութիւնից, յետոյ սիրահարուեցիր:

**ՀԵՐՍԷԼԻ:** (Ոուբէնին): Այն Բնչ մանկուկան լիշտատակի մասին էր ձեր խօսքը:

**ՌՈՒԲԻՆ:** Մանուկ ժամանակս, երբ մի ամառ ձնողներիս հետ ալստեղ էինք, մի անդամ ահա այն թմբից

գլորուել եմ: (Նայելով շուրջը): Այն ժամանակ այս  
տեղերն ամալի էին:

ԱՆՆԱ: (Մերթ անցուղարձ է անոա, մերթ կանգ  
առնում): Իսկ այժմ քո գլորուած տեղում բուել է մի  
շքեղ ամրոց: Տես, որ նրա կախարդուհին չը դիւթի  
քեզ...

ՀԵՐՍԵԼԻ: Դու անուղղելի ես, Աննա... Ահա և  
ամուսինս...

## ՏԵՍԻՆ ՎII

### ՆՈՅՆՔ, ԱՆՏՕՆ և ՄԱՐՄԱՐԵԱՆ

Անտօնն եւ Մարմարեանը դուրս են գալիս միա-  
ժամանակ, առաջինը պատշաճի առաջին, երկրորդը  
երկրորդ դռներից:

ՀԵՐՍԵԼԻ: (Անտօնին): Դու վերջացրեք գործդ:

ԱՆՏՕՆ: (Իշնելով պարտէզ): Այս:

ՀԵՐՍԵԼԻ: Ուրեմն կարող ենք այժմ զբօսնել:

ԱՆՏՕՆ: Բայց թոլլ տուր նախ ծանօթանամ մեր  
հիւրի հետ:

ՌՈՒԲԻԵՆ (Մօտենում է եւ Անտօնին ծեռ է տա-  
լիս): Ալիմբարեան: Եթէ չեմ սիալում, ձեզ հանդի-  
պել եմ արտասահմանում:

ԱՆՏՕՆ: (Բաւական անտարձեր) Շատ կարելի է...

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Բարեւելով): Գուցէ և մեր հրա-  
մանոց:

ՌՈՒԲԻԵՆ: Այս և ձեզ, երկուսիդ միասին, Փարիզում:

ՀԵՐՍԵԼԻ: Աննա, այժմ ես կարող եմ ցոյց տալ  
քեզ մեր ամարանոցի շրջակալքը: (Ռուբէնին) Եւ ձեզ,  
եթէ կամենաք զբօսնել:

ՌՈՒԲԻԵՆ: Ուրախութեամբ:

ԱՆՏՕՆ: Շոք է բաւական:

ՀԵՐՍԵԼԻ: (Կատակով) Քեզ համար միշտ կամ շոք

Է կամ ցուրտ: Բայց պարմանով, Աննա, որ դուք ալսօր մեզ մօտ ճաշէք: (Մուգէնին) Յուսով եմ չէք մերժի: Ուուգէնը համածայնութով զլուխ է տալիս:

ԱՆՆԱ: (Մօտեցել է ցանկապատին եւ ղիտում է հնոուն): Ի՞նչ գեղեցիկ շրջակալք ունի ձեր ամարանոցը: Հերսէլի, դու, երևի, ամեն օր զբունում ես:

ՀԵՐՍԵԼԻ: Ոչ, ես շատ քիչ եմ զբունում:

ԱՆՆԱ: Ինչու:

ՀԵՐՍԵԼԻ: Մօտիկ աեղերում զբունել չեմ սիրում, իսկ հեռու գնալու համար ընկերակից չունիմ:

ԱՆՆԱ: (Մօտենալով ընմի կենդրունին) Իսկ պարունակում:

ՀԵՐՍԵԼԻ: Օօ, նա շատ ծոլլ է զբունելում:

ԱՆՏՈՆ: Ծոլլ է: Դու հարթ տեղերը թողած սիրում ես թռչկոտել ժայռերի վրալ և ինձ էլ ստիպել որսորդական շան պէս քեզ հետեիլ: Ի հարկէ, կը ծուլանամ:

ՀԵՐՍԵԼԻ: Այո, ես սիրում եմ ժայռերը, լեռները, խոր ձորերն ու մթին անդունդները: (Դէսկի պատշգամը) Վիրժինէ...

Աննան վոտենում է համակին:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Մեկուսի) Խոր ձորերը, մթին անդունդները, օօ, երիտասարդութիւն, երիտասարդութիւնն Վիրժինէն զալիս է:

ՀԵՐՍԵԼԻ: (Վիրժինէին) Բեր ալստեղ գլխարկս ու հովանոցս:

Վիրժինէն գնում է:

ԱՆՆԱ: (Վերցրել է համակի վրայից զերքը եւ նայում է վերնազրին) «Բարոյականութիւն, թէ նախապաշարմունք»: Հերսէլի, դո՞ւ ես կարդում այս գիրքը:

ՀԵՐՍԵԼԻ: Այո:

ԱՆՆԱ: (Գիրքը ղնում է իւր տեղը): Հետաքրքրական է:

Վիրժինէն քերում է Հերսէլիի զլխարկն ու հովանոցը:

ՀԵՐՍԷԼԻ: (Գլխարկը ղնելով) Ես պատրաստ եմ:  
(Անտօնին) Գալիս ես, թէ չէ:

ԱՆՏՕՆ: Ինձ ներիր: Ես բարւոք եմ համարում  
իլիալի հետ նառդի խաղալ քան թափառել արեգակի  
տակ: Վիրժինէ, բեր ալստեղ նառդին:

Վիրժինէն գնում է: Հերսէլին դժկամակութեան  
նշան է անում:

ՀԵՐՍԷԼԻ. ՄԵՆՔ երկար չենք զբօսնի: Աննա,  
տուր ինձ թեգ: (Առնում է թերը) Ահա այսպէս: Ես  
լիշեցի մեր անցեալը և դարձեալ զգացի ազատութիւն: Աննա,  
չես կարող երևակալել, թէ որքան ուրախ եմ  
քո գալուն:

Գնում են, ուրախ ուրախ զրուցելով: Ռութէնը  
գլուխ է տալիս Անտօնին ու Մարմարեանին ու հետեւում նրան:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Աչքերով ուղնկցել է Հերսէլիին,  
ապա դառնում է Անտօնին) Ինչու չը գնացիր նրանց հետ:  
ԱՆՏՕՆ: Ծուլանում եմ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: (Խորհրդաւոր) Իսկ ալդ Ալիմբա-  
րեանը չի ծուլանալ և ամեն տեղ իւր կնոջը կը հետեւի:  
ԱՆՏՕՆ: Դարձեալ նոյնը:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Դարձեալ և միշտ պիտի կըկնեմ.  
Կամ ժողովիր բոլոր ուժերդ և դարձիր կենոասէր ինչպէս  
Հերսէլին, կամ զսպիր նրա մէջ կենսասիրութեան հուրը:  
ԱՆՏՕՆ: Ես ծեր չեմ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ոչ, գու նրա համար ծեր ես թէ  
մարմնով և թէ հոգով: (Վիրժինէն քերում է նառդին):

ԱՆՏՕՆ: Իբրև հիւանդ բարեկամի, ես ներում եմ  
քեզ լիմար խօսքերդ: (Վերջնում է նառդին Վիրժինէից,  
որն իսկոյն հեռանում է):

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Ուրեմն ներիր մի խօսք ևս ասել:

Մի փոքր առաջ Հերսէլիի հետ վիճելիս, դու ասացիր.  
«կինը ծնուած է միայն ամուսին և մայր լինելու հա-  
մար»։ Ես անլարմար համարեցի նրա ներկալութեամբ  
նկատել, ալժմ կընկատեմ. Անտօն, քիչ կըկնիր ալդ  
բանալ դարձուածը, կը փոշիմանես։

**ԱՆՏՕՆ:** (Ժիծաղում է) Դէ լաւ, քիչ զօռ տուր խել-  
քիդ։ Նստիր խաղանք։

Մարմարեանը նայում է նրան սուր յանդիմա-  
նական հայեացքով եւ նստում ու զառերից մէկը վեր-  
ցնում։

**ԱՆՏՕՆ:** (Զառը զցելով) Այսօր ես անպատճառ  
կը տանեմ...

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Տեսնենք...

Վ Ա Ր Ա Գ Ո Յ Թ Ր

## ԴՈՐԾՈՂՈՒԹԻՒՆ ԵՐԿՐՈՐԴ

Նոյն ամառանոցի ներքին կողմը: Միջակ հիւրասենեակ, թեթեւ, բայց սիրոն կահատը ուած: Աշ կողմում երկու դռներ, որոնցից խորքինը տանում է Անտոնի առանձնասենեակը, իսկ ավանսցենայի կողմինը մը ուրիշ ազատ սենեակ: Այս երկու դռների միջև վառարան, որ երքէք չի վառութէ: Զախ կողմում եւս երկու դռներ, որոնցից ավանսցենայի մօտինը տանում է ննջարան, իսկ խորքինը սեղանատուն: Խորքի պատի մէջ միայն մի դուռ լայն, կամարաձեւ նրա աջ ու ծախ կողմերում մեծ մեծ լրամիւտներ: Այս պատի առջեւ պատճամք, որ շարունակում է դէպի ծախ, բեմի ետեւը: Պատշգամթից դէն պարտէզ, յետոյ անտառ, այնուհետեւ ժայռեր, լեռներ, ձորեր: Հիւրասենեակի խորքի աջ աւկինում սեղան, վրէն գրքեր, ամսագրեր, լրագիրներ, այլքօմ եւ լրաանկարներ: Զախ անկիմում պիանինօ, վրէն ծաղիկների մի փունջ եւ մի տուփ կօնֆեկտներ: Այս ու այն կողմում պատերի տակ աթոռներ, իսկ բեմի մէջ տեղում գահաւորակ եւ թեթև բազկաթոռներ:

Ի՞րիկնադէմ է: Արեգակը նոր նոր մայր է մտնում: Հեռաւոր լեռների գագաթները լրաատը ում են նրա վերջին շողերով: Վարագոյրը քարծրանալուց յետոյ հետզհետէ այդ շողերը չքանում են, լեռների խորքից դուրս է գալիս լրաինը:

Տօնային ճաշը նոր է աւարտութէ: Հիւրերը զքօսնում են պարտիզում: Թեմից երեւում են նրանց գլուխները, յետոյ չքանում: Ժառաները սեղանը հաւաքում

Են: Մերթ ընդ մերթ Սամսոնը ֆռակով եւ Վիրժինէն տօնային հագուստով անցնում են պատշզամբով, պարտիզլց դէպի ծախ տաննլով ափսէներ, դանակ-պատուաքաղ, գինու շիշեր եւ այլն:

Բոլոր դռներն ու լուսամուտները բաց են.

## ՏԵՍԻԼ 1

### ՍՈԼՈՄՈՆ և ՆԱՏԱԼԻԱ ՍՈՒՐԱԹԵԱՆՆԵՐ

**ՍՈԼՈՄՈՆ:** (Առողջ դէմքով, իւր տարիքի համեմատ կայտառ տղամարդ է, կարծ խուզած ալեխառն միրուքով ու մազերով: Հազած է Մոխրագոյն ոնդինկօտ, կոճակները բաց, սպիտակ ժիլետ, որի վրայ օրօրում է վզից քաշ արած պանսնէն: Ներս է մտնում խորքի դռներից, նախ քան մտնելը ինչոր պատուէր է տալիս պատշզամբով անցնող Սամսոնին): ՕՓ, վերջապէս, ճաշն աւարտուեց: Ալդ կովկասեան «կենացները» զահլա են տանում: Ալժմ փորձենք մեր փեսալի սիզարը: (Հանում է ժիլետի գրանից մի սիզար եւ վառում):

**ՆԱՏԱԼԻԱ:** (Նիհար երեսով, չոր-չոր կազմուածքով կին է, որի խելացի աչքերն արտայայտում են կամքի հաստատութին եւ վծուականութիւն: Նա գլխաքաց է: Ալեխառն մազերը բաւական նօսրացել են, բայց դէմքը դեռ կրում է անցեալ գեղեցիկութեան հետք: Հազած է մետաքսեայ ընկուզեգոյն շրջազգեստ առանց արդուգարդի: Ներս է մտնում ամուանու հետ: Դու ուզում ես թուղթ խաղմել:

**ՍՈԼՈՄՈՆ:** (Հնկղմուելով գահաւորակի վրայ) Ալո, բարոյականութեանս արթուն պահապան և առհասարակ տղամարդի ժուժկալութեան ջատագով: Զը տեսածը, որ Սամսոնին հրամալեցի սեղան բաց անել: Ո՞ւր գնացին հիւրերը:

ՆԱՏՈԼԻԱ. Շատերը ցըուեցին, մնացեալը տիկին Ալիմբարեանի խելքով գնացին ձորի գլուխը։ Արեգակի մալը մտնելն են գիտում, իբրև թէ չը աեսնուած բան է։ Սոլոմոն, տուն գնալու ժամանակ է։

ՍՈԼՈՄՈՆ. Ոչ, հոգոյս ու մարմնիս հատոր, ոչ։ Մքթէ մոռացել եմ Սոլոմոն Սուրաթնանի կեանքի նշանաբանը, միշտ զուարճալին գերադասել ընտանեկան եղելլիքից։

ՆԱՏՈԼԻԱ. (Նստում է հառաշելով)։ Ախ, ախ, չը գիտեմ երբ պիտի ձեռք վերցնես ալդ նշանաբանից։

ՍՈԼՈՄՈՆ. Սուս, ճանճի պատարագը մի սկսիր։ Բայց ճաշը հիանալի անցաւ։

ՆԱՏՈԼԻԱ. Զը գիտեմ։ Ինձ համար զլխաւորն այն է, որ Հերսէլին տլաօր ուրախանում է։

ՍՈԼՈՄՈՆ. Եւ ի՞նչպէս։ Ալսօր նրա ամուսնութեան վեցերորդ տարեդարձն է, և ես ոչ մի անգամ նրան ալսօրուայ պէս զուարթ չեմ տեսնել։

ՆԱՏՈԼԻԱ. (Մտազրաղ) Ալո, հիմա կարող եմ ձեռքս խղճիս վրայ դրած ասել, որ ես աղջկաս բաղդաւորեցրի։

ՍՈԼՈՄՈՆ. Պատշզամքի վրայ աջ կողմի լուսամտի առջեւ թղթախաղի սեղան է բաց անում։

ՍՈԼՈՄՈՆ. Հոգով փափագում եմ հաւատալ, բայց...

ՆԱՏՈԼԻԱ. Ել բայց ու մայց չը կալ։ Հերսէլին ունի ամեն բան, ինչոր հարկաւոր է մի կնոջ բաղդաւորութեան համար։

ՍՈԼՈՄՈՆ. Բացի մէկից — համապատասխան ամուսնուց։

ՆԱՏՈԼԻԱ. Հերիք է, Աստուած սիրես, մի կրկնիր ալդ լիմար խօսքը։

ՍՈԼՈՄՈՆ. Ոչ, սիրելիս, ասել եմ և միշտ պիտի ասեմ — Անտօնը ոտից մինչև գլուխ պոօզա է, ալն էլ մաշուած պոօզա, իսկ Հերսէլին, օօ, Հերսէլին ուրիշ

կին է, դու նրան դեռ լաւ չես ճանաչում։ Վերջապէս, երբէք մինչև 30 տարեկան հասակը մի կնոջ համար չի կարելի ասել բաղդաւոր է նա թէ անբաղդ։ Սպասիր դեռ։

**ՆԱՏԱԼԻԱ:** Ես կարծում եմ վեց տարուայ կենակցութիւնը բաւական է համոզուելու համար, որ Հերսէլին բաղդաւոր է։

**ՍՈԼՈՄՈՆ:** Կարծիր ինչ-որ ուզում ես. բայց ես կոլը չեմ։ Լսիր, ալսօր ճաշի միջոցին, երբ այդ Ալիմբարեանները այնպէս զուարճանում էին, ես Հերսէլու դէմքի վրա նշամարեցի մի տեսակ թափիծ։ Ես համոզուած եմ, որ նա այդ բոպէին մտածում էր. գինչու ես ևս չունիմ դրա նման ամուսին։ Իսկ երբ մի կին ալսպէս է մտածում, նա երբէք չի կարող բաղդաւոր լինել։ Ինչ և է, մի աններելի սխալ էր, որ դու արիր, Հերսէլուն տալով այդ մարդուն։

**ՆԱՏԱԼԻԱ:** Լոկիր, ի սէր Աստծու։

**ՍՈԼՈՄՈՆ:** Կը լուեմ, բայց երևի, մի օր ինքը Հերսէլին կը խօսի։ Եհ, թողնենք, գալիս են, ես գնացի թուղթ խաղալու։

(Դուրս է գալիս պատշգամը)։

**ՆԱՏԱԼԻԱ:** (*Մտազրադ*) **ՄՔԹԷ** նա չի սխալւում։ (*Մնում* է քանի մի վայրկեան ամուսնու խօսքերի տպաւորութեան տակ, ապա, ճեռքով մի վճռական շարժումն անելով, անցնում է ննջարան)։

**Սոլոմոնն երեք հիւրերի հետ նստում է թղթախաղի։**

## ՏԵՍԻԼ Ա

ՀԵՐՍԷԼԻ, ԱՆՑՈՆ, ԱՆՆԱ ԵՒ ՌՈՒԲԵՆ, ԱԼԻՄԲԱՐԵԱՆՆԵՐ, ՍՈՒՐԵՆ ԵՒ ՎԱՐՎԱՐԵ ՖՈԱՆԳՈՒԼԵԱՆՆԵՐ ԵՒ ՄԱՐՄԱՐԵԱՆ.

Հերսէլին հազած է ուղախ գոյնի ամառային թե-

թեւ բայց մոխ շրջազգեստ։ Աննան նոյնպէս տօնային հագուատով է։ Անտօնը հազած է բաց գոյնի նորածեւ կարուած հագուատ։ Ամենքը զուարժ տրամադրութեան մէջ են։

Սամսոնը սեղանատնից թէյ է քերում եւ սկսում բաժանել։

**ԱՆՆԱ:** (Ոգեւորուած) Սի, ինչ հիանալի երևոյթ էր արեգակի մայր մտնելը։ Քանի քանի անգամ ամպերն ու լեռները իրանց գոլները փոխեցին։ Եւ ինչ գոլներ։ Երանգների ալդպիսի մրցումն ես չեմ տեսել ոչ Շվեյցարիալի և ոչ Խտալիալի երկնքի տակ։

**ՀԵՐՄԵԼԻ:** (Անսովոր զուարժ) Աննա, դու վարակեցիր ինձ քո ոգեսորութեամբ։ Որքան աշխոյժ և վառվուն ես, Աննա։ Դու խօսքով ուղղակի կեանք ես փշում ամենաչնչին երևոյթներին։ Քո ալստեղ գալուց լետոյ շատ բան է փոխուել իմ աչքում։ Սուած ես սիրում էի խոր ձորերը, մթին անդունդները և սոսկալի բարձրութիւնը։ Դու ինձ սովորեցրիր սիրել բնութեան մեղմ, քնքոյշ տեսարանները։ Ի՞նչ եմ ասում, դու ինձ սովորեցրիր սիրել կեանքի լուսաւոր կողմերը և հասկանալ նրանց խորհուրդը։

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Ասում են, արտաքին երևոյթներին գոյն տուողը մեր անձնական տրամադրութիւնն է։

**ԱՆՆԱ.** Ահա տլդ է ճիշդը, Հերսէլի, մեր անձնական տրամադրութիւնը։ Այսօր քո ամուսնութեան տարեդանն է, ուրախ հիւրեր, սքանչելի բնութիւն (ժղպտալով), գուցէ մի փոքր էլ շամպայնը ազդել են քեզ վրայ։ Իսկ դուք, պարոն Անտօն, ինչպէս երևում է, շատ էլ չէք սիրում բնութեան հրաշալիքները...

**ԱՆՏՕՆ:** (Այդ միջոցին զբաղուած է ինչ-որ գործնական խօսակցութեամբ Սուրէնի հետ) Ես վաղուց եմ կշտացել ալդպիսի տեսարաններից։

**ՀԵՐՄԵԼԻ:** Դու երբէք բնութեան գեղեցկութեամբ

**Հես.** Հիացել: (Վերցնում է պիանօի. վրայից կօնֆէկտ-ների տուփը, բաց է անում և դնում սեղանի վրայ):

**ՎԱՐՎԱՐԻԵ.** (Պարզ հագնուած քաւական սիրուն, բայց գէր ու կոշտ դէմքով կլն է): Ուղիղն ասած, ես զարմանում եմ, որ մարդիկ ամեն դատարկ բանով հիա-նում են: Արեգակը մայր մտաւ, լուսինը դուրս եկաւ, երկինքը կարմրեց, կապտեց, չը գիտեմ ինչ հիանալի բաներ են դրանք: (Վերցնելով երկու խոշոր կօնֆէկտ-ներ, մէկն իւր ընթանն է դնում, միւսը տալիս է ա-մուսնուն):

**ՍՈՒԻՐԵՆ:** (Նկատելով Աննայի հեղնական ժպիսն իւր կնոջ խօսքերի վրայ, գրգռում է): Իմ կարծիքով, գեղեցիկ կարելի է համարել միայն այն, ինչ-որ ալս կամ այն կերպ նպաստում է մեր կեանքի բարօրութեանը: Իսկ այդ բարձր լեռներն իրանց ձիւնապատ գագաթնե-րով ուրիշ ոչինչ են եթէ ոչ մի մի խոչնդում մեր կեան-քի բարօրութեան համար:

**ՈՈՒԻԲԵՆ:** Այդ բնչպէս, հետաքրքրական է իմա-նալ:

**ԱՆՏՕՆ:** Շատ հասկանալի է, եթէ այդ լեռները չը լինէին, գուցէ մեր երկիրն ալսօր ծածկուած լինէր երկաթուղու գծերով:

**ՍՈՒԻՐԵՆ:** Եւ մենք մեր ապրուստի միջոցները կըր-կնակի էժան ձեռք բերէինք մեր կեանքի բարօրութեան համար...

**ՈՈՒԻԲԵՆ:** Դարձեալ կեանքի բարօրութիւն... բայց բնչն էք համարում կեանքի բարօրութիւն, պարոն ծուանդուլեան...

**ՍՈՒԻՐԵՆ:** Իմ ընտանիքի առողջութիւնն ու նիւթա-կան ապահովութիւնը:

**ԱՆՆԱ:** Կարճ և հասկանալի:

**ՎԱՐՎԱՐԻԵ:** (Մի կօնֆէկտ եւա վերցնելով): Ի հար-կէ, ալդպէս է, ամենքի համար ալդպէս է: (Դնում է

Կօնֆէկտը քնրանը) Դու համաձայն չես, Հերսէլի:

ՀԵՐՄԻԼԻ: Ինձ մի հարցրու: Ես այնպիսի տրամադրութեան մէջ եմ, որ չը գիտեմ, չը գիտեմ... գուցէ պատրաստ եմ գեղեցիկը սիրել նոյն իսկ լանցանքի մէջ:

ԱՆՏՈՆ: (Զարմացած) Գեղեցիկը լանցանքի մէջ...

ԱՆՆԱ: Նոտ անգամ գեղեցիկը լանցանքի մէջ բիւր անգամ հաճելի է, քան առաքինին տգեղութեան մէջ:

ՄԱՐՄԱՐԵԱՆ: Տարօրինակ խօսքեր մեր կանանց բերանում:

ՎԱՐՎԱՐԻ: Խելքս բան չը կտրեց: (Կօնֆէկտ է վերցնում):

ՌՈՒԲԻՔԻՆ: Ես ալսպէս եմ հասկանում տիկնանց ասածը. գեղեցկութիւնն ուրիշ ոչինչ է, եթէ ոչ առաքինութիւն: Իհարկէ, գեղեցկութիւն ընդհանուր մտքով և ոչ միայն Փիզիքական գեղեցկութիւն:

ՎԱՐՎԱՐԻ: Այենից հասկանալին Սուրէնի ասածն էր. ընտանիքի տողութիւն և ապահովութիւն, մնացեալը լիմար բաներ են:

ՌՈՒԲԻՔԻՆ: Միանգամայն լիմար... Ալո, բնութեան և կեանքի որ հրաշալիքը կարող է ալնքան հաճոյք պատճառել, որքան ընտանիքի կուշտ և առողջ դէմքերը..

ՍՈՒՐԻՔԻՆ: Դուք կատակ էք անում, պարոն Ալիմբարեան:

ՌՈՒԲԻՔԻՆ: Ոչ ոչ, ես հրճւում եմ, տեսնելով, որ մեզանում կենսական բոլոր խնդիրները գումարուած ու դրուած են մի գծի տակ—ընտանիքի առողջութիւն և ապահովութիւն: Մնացեալ բոլոր խնդիրները դատարկ բաներ են, լիմար անգործ մարդկանց անօգուտ խելքի արդիւնք...

ՍՈՒՐԻՔԻՆ: Դուք պարզապէս ծաղրում էք, պարոն Ալիմբարեան, չը նալելով, որ ինքներդ ամուսնացած էք: Բայց ես կասեմ, որ անհատի երջանկութիւնը հա-

տատուն չէ: Եթէ հիմնուած չէ այն պատուանդանի վրայ, որի անունն է ընտանիք:

**ՍՈԼՈՄՈՆ:** (պատշզամբից) Զարմանալի չի բերում թուղթս, զարմանալի: Փաս:

Անտօնը զլիով հաւանութեան նշան անելով Սուրէնին, մօտեցել է Հերսէլոն, որ նստած է զազկաթոռի վրայ, եւ կանգնելով նրա ետեւոմ, ճնոնները սիրալիթ դրել է նրա ուաերի վրայ: Հերսէլին տիրուած է:

**ՌՈՒԲԵՆ:** (Դառն հեգնութեամբ) Ափսոս միալն, որ ալդ ձեր ամուր համարուած պատուանդանն ալժմ բաւական խախտուած է, պարոն Փոանգուլեան: Եւ նրանք, որոնց աշխարհահայեացքը մի փոքր բարձր է իրանց տմուսնու կօշիկներից, ալժմ չեն կարողանում իրանց անհատական երջանկութիւնը նրա վրայ հիմնել:

**ՍՈՒՐԵՆ:** (Տաքանալով) Ալդ այնտեղ, ձեր լուսաւոր Եւրոպայում, և ոչ մեզանում:

**ՌՈՒԲԵՆ:** Ահ, երանի ընտանիքը մեզանում ալնքան երջանիկ լինէր, որքան այնտեղ:

**ՆԱՏԱԼԻԱ:** (Գալիս է ննջարանից) Օհ, լոգնեցի նրանց զրադեցնելուց: Կարծեմ, քնել են ուզում:

**ՀԵՐՍԵԼԻ:** Ահ, ժամանակ է: (Ծոտապով անցնուած է ննջարան):

**ՆԱՏԱԼԻԱ:** Անտօն, նրանք քեզ են ուզում:

**ԱՆՏՈՆ:** (Կէս կատակով եւ կէս լուրջ): Ներեցէք, ես պիտի երեխաներին քնեցնեմ: (Գնում է ննջարան):

**ՎԱՐԴԱՐԻԵ:** (Դուքէնին): Տեսնք, ալդ է ընտանեկան երջանկութիւնը համ:

**ՌՈՒԲԵՆ:** Ես ալլ իս ոչինչ չեմ ասում: (Մօտենում է պիտանօյին եւ նօտաննը թերթում):

**ՍՈԼՈՄՈՆ:** (Պատշզամբից): Նատալիա, արի մօտս կանգնիր, քո ոտն ինձ գալիս է: (Նատալիան զնում է պատշզամբ):

Բեմի նտեմից լսում է շուկի ծայն։ Բոլորն ականջ են դնում։

ԱՆՆԱ։ ԱՀ, ալդ ի՞նչ է։

ՄԱՐՄԱՐԵԱՆ։ Շուկ։ Մի ոտաքորիկ և կիսամերկ եղիդի ամեն երեկոյ գալիս է, լուսամուտի տակ, թմբի վրայ ծալապատիկ նստում ու նուագում։ (Մօտենում է Ռութէնին)։

ԱՆՆԱ։ Հիանալի՞ է։ Եւ ինչ սազում են մելամաղձոտ հնչիւնները լուսնկալ երեկոլին։

ՌՈՒԹԷՆ։ Շատ հետաքրքրական է տեսնել ալդ երաժշտին։

ՄԱՐՄԱՐԵԱՆ։ Գնանք։ (Յածը ծայնով)։ Ես ձեր բոլոր ասածների միտքը հասկացայ։ Խօսենք առանձին։ (Դնում է պատշգամք Ռութէնի թեմնառած)։

ՎԱՐՎԱՐԵԿ։ Գնանք, Սուրէն, մենք էլ մօտիկից լսենք։ (Վերցնում է մի բուռն կօնֆէկտ։ Աննային)։ Դուք չեք ուզում լսել։

ԱՆՆԱ։ Հեռուից աւելի քաղցը է հնչում զուին։

ՍՈԼՈՄՈՆ։ (Թղթերը ճգնալով սեղանի վրայ)։ Պարոններ, ես՝ էլ չեմ ուզում խաղալ։ Բաւական է ինչքան տարուեցի։ (Վեր է կննում եւ նատալիայի հետ անցնում պատշգամքի ծախ կողմը։ Խաղընկերները հետեւում են նրան, զուարժ խօսակցելով)։

### ՏԵՍԻԼ III.

ՀԵՐԱԷԼԻՆ դուս է գայիս ննջարանից։

ՀԵՐՍԷԼԻ ԵՒ ԱՆՆԱ։

ՀԵՐՍԷԼԻ։ Դու մնացել ես մենակ։

ԱՆՆԱ։ Ես մնացի, կամենալով առանձնանալ քեզ հետ։

ՀԵՐՍԷԼԻ։ Ես էլ կամենում էի քեզ հետ առանձնանալ։ (Բոնելով լնկներունու ծեռը)։ Ախ, Աննա, չը գիտեմ ինձ ինչ է պատահում, մի զարմանալի տրա-  
լուսուՑ

մադրութեան մէջ եմ։ Կարծեմ մի քանի լիմարութիւններ ասացի։

ԱննԱ։ Ցիմարութիւններ չասացիր, միայն...

ՀԵՐՈՒԵԼԻ։ Միայն ինչ, ասա...

ԱՆՆԱ։ Տրտմագրութիւնդ մատնեցիր հիւրերի ներկայութեամբ։ Հերսէլի, ես հասկանում եմ քո հոգին և...

ՀԵՐՈՒԵԼԻ։ Եւ խղճում ես, այս... Ախ, երանի քեզ Աննա, հազար երանի, որ ուշ ես ամուսնացել և ինքդ վճռել քո ճակատագիրը։

ԱՆՆԱ։ Բայց չէ որ քո ճակատագիրն էլ ինքդ ես վճռել։

ՀԵՐՈՒԵԼԻ։ (Դառն հեգնութեամբ)։ Ե՞ս։ Եւ դու հաւատում ես ալդ բանին։ Ոչ, Աննա, իմ կամքը իմ ծնողների գերին է եղել, այսինքն իմ մօր գերին, հալլս մեղ չունի։ Նա է կուրացրել է իմ աչքերը, մթնեցրել իմ ուղեղը, խլել ինձանից իմ կամքի ոլժը։ Նա իմ շուրջը լստեղել է գովասանքների արքեցուցիչ մթնոլորդ, ուր շոգիացել են Բէգմուրեանի լծերութիւնները և խոշորացել նրա մըջիւնալին արժանաւորութիւնները։ Եւ այնուհետև միայն դարձել է իմ կամքին և ասել. «սիրեիս, մենք քեզ չենք ստիպում, այլ միայն հարցնում ենք ուղում ես գնալ Բէգմուրեանին»։ Ես արտասանել եմ «այս»։ Եւ այդ «այս» միանգամ առ միշտ նրան ազատել է սպագալի բոլոր պատասխանաւորութիւնից։

ԱՆՆԱ։ Բայց չէ որ դու ասում էիր, թէ Բէգմուրեանը լաւ մարդ է։

ՀԵՐՈՒԵԼԻ։ Ասում էի և ալժմ էլ նրան չեմ պախարակում։ Բայց ինձ ինչ, Աննա, որ նա լաւ մարդ է, ինձ ինչ։ Նա օտար է իմ սրտին, միանգամայն օտար և միշտ օտար է եղել, միշտ...

ԱՆՆԱ։ Խեղճ, Հերսէլի, ուրեմն դու դժբանդտ ես...

ՀԵՐՈՒԵԼԻ։ Եւ դու դեռ հարցնո՞ւմ ես։ Միթէ չե՞ս դիտում, չե՞ս տեսնում։

Շուին դադարում է։

ԱՆՆԱ: Ես միայն տեսնում և զգում եմ, որ նա բոլորովին քո կեանքի ընկերը չէ: Բայց վեց տարի ապրել էք միասին, միթէ սովորութիւնը քեզ չի կապել նրա հետ:

ՀԵՐՍԵԼԻ: Կապել է, ալո՛, անտանելի շղթաներով:  
Ապրել եմ: Ով, եօ: Ոչ, ես չեմ ապրել, ալլ թմրել եմ  
բուսական կեանքի թմրութեամբ:

Շուկին նոր եղանակ է սկսում:

ԱՆՆԱ: Եւ նոր ես զգում ալդ:

ՀԵՐՍԵԼԻ: Խնչու նոր: Զգում եմ այն օրից, երբ  
սկսել եմ ճանաչել կեանքը, հասկանալ իմ վիճակը:  
Ալժմ միայն իմ դրութիւնը աւելի անտանելի է ժւռում  
ինձ, և պատճառը դու ես, Աննա...

ԱՆՆԱ: Ե՞ս:

ՀԵՐՍԵԼԻ: Ալո, դու, Աննա, մի վիրաւորուիր, ալդ  
քեզ պատիւ է բերում: Ես միշտ զգում էի, որ կան աշ-  
խարհի երեսին երջանիկ մարդիկ, կալ և երջանիկ կեանք:  
Զգում էի մուլթ կերպով, բնազդմամբ: Քո գալուց յե-  
տոյ ինձ համար պարզուեց այն, ինչ-որ մութն էր մին-  
չև ալժմ: Քո գեղեցիկ բացադրութիւնները իսկական  
երջանիկ ամուսնական կեանքի, քո ընդարձակ հայեացք-  
ները մարդկային գոլութեան մասին, քո ազատ գաղա-  
փարները կնոջ ինքնուրույնութեան վերաբերմամբ և  
վերջապէս, քո սեպհական երջանկութիւնը տուեցին իմ  
բաղդին վերջին հարուած: Եւ ալժմ ես միանգամայն  
դժբաղդ եմ, Աննա... Ներիր, սիրելիս, իմ նախանձը  
չար չէ, ալլ բարեկամական, եղիր երջանիկ բիւր անգամ  
աւելի, իսկ ես... ես անբաղդ եմ: (Հանդարտ լալիս է):

Շուկին դադարում է:

ԱՆՆԱ: Հանգստացիր, սիրելիս, ուշիքի եկ, ժամա-  
նակ չէ: Յետոյ կը խօսենք: Ահա, կարծեմ, գալիս են:

ՀԵՐՍԵԼԻ: Ոչ, ոչ, ալլ ևս չեմ ուզում կեղծիքով  
ապրել, հերիք է... (Աչքերը սրբում է, ուշքը ժողովում):

ԱՆՆԱ: Կեղծիքով ապրել, ալո, կեղծիքով ապ-  
րովը թշուառ է:

Պատշգամից ներս են մոնում Ռուբէնը, Մարմար-նանը, Փոանգունանները, Սուրաթեանները և հիւրերը:

### ՏԵՍԻԼ 1V

**ՌՈՒԻԲԵՆ:** Ալդ շատ հետաքրքրական էր: Վաղոց չեի լսել: Խեղճ մարդ, ինչպէս տպշած նալեց երեսիս, երբ ես ծափահարեցի:

**ՄԱՐՄԱՐԵԱՆ:** Արևելցու տեսակէտից ծափահարութիւնը մի տեսակ վայրենութիւն է: Արևելցին երաժշտութեամբ հրճում է սրբազն լոռութեամբ:

Անտօնը դուրս է գալիս ննջարանից:

**ՌՈՒԻԲԵՆ:** (Մօտենալով Հերսէլոն): Ցը տեսութիւն, տիկին, ձեր ընկերութիւնից կշտանալ չի կարելի, իսկ արդէն ուշ է:

**ՀԵՐՈՒԵԼԻ:** Թոյլ տուէք, որ Աննան ալս գիշեր ինչ մօտ մնալ:

**ՌՈՒԻԲԵՆ:** Թոյլ տամ: Տիկին, իմ և Աննալի լարաբերութիւնների մէջ թոյլտուութիւն բառը ջնջուած է: Ազատ է անելու, ինչ-որ կամենում է: (Աննային) Կամենում ես մնալ:

**ԱՆՆԱ:** Ես կը վերադառնամ, Հերսէլի, թող գնամ մօրաքրոջ հանգստացնեմ: Ամբողջ օրը նա ինձ չի տեսել: Առ այժմ, ցտեսութիւն: (Սեղմումէ Միւսների ծեռը):

**ՎԱՐՎԱՐԻ:** Սուրէն, երեխանները անհամբեր սպասում են: Ես ուրիշի տանը գիշերեւ չեմ կարող: (Ուզում է մի կօնֆեկտ նև վերցնել, բայց ամաչում է, յետ է քաշուա):

**ՀԵՐՈՒԵԼԻ:** (Կօնֆէկտների տուփը փակելով, առաջարկում է Վառվառէին): Սիրելիս, ալս առւը երեխաններիդ իմ կողմից:

**ՎԱՐՎԱՐԻ:** (Վերցնում է տուփը) Եհ, ինչ հարկաւոր է, աւելորդ է:

**ՀԵՐՈՒԵԼԻ:** Ոչ ոչ, վերցընու: Համբուրուամ է Վառվառէի հնտ):

Թոլոր Տիւրենը սեղմում են տանտէրերի ծեռքը եւ զնում խոզի զոներով։ Հերսէլին եւ Անտօնը ուղեկցում են նրանց մինչեւ պատշգամբ։ Այնտեղ Սամսոնը տալիս է նրանց վերաբերությունը, ծեռափայտ եւ այլն։ Վերժինէն հաւաքում է բաժակներն ու տանում սեղանատուն։

## ՏԵՍԻԼ Վ

ՀԵՐՄԵԼԻ ԵՒ ԱՆՏՕՆ։

ԱՆՏՕՆ։ (Վերադառնում է Հերսէլու թերից զըռնած)։ Ես հոգով փափագում եմ քեզ հետ առանձնանալ, իսկ դու տիկին Ալիմբարեանին խնդրում ես քեզ մօտ գիշերել։ Զեմ հասկանում, ալդ ինչ տարօրինակ ցանկութիւն էր։

ՀԵՐՄԵԼԻ։ (Թեևն ազատելով) Երեխաները քնեցին։

ԱՆՏՕՆ։ Շատ հանգիստ։ Թող ինչ ուզում է ասի ալդ պարոն Ալիմբարեանը, ինձ համար ընտանիքից բարձըր բան չը կար։

ՀԵՐՄԵԼԻ։ Կարծեմ, Ալիմբարեանը ընտանիքին աւելի բարձր և աւելի մեծ նշանակութիւն տուեց, քան դու, քո քեռորդին և ամենքը։

ԱՆՏՕՆ։ Նա հերքեց ընտանեկան կեանքի երջանկութիւնը։

ՀԵՐՄԵԼԻ։ Ալո, ալն ընտանեկան կեանքի, որ հիմնուած չէ համերաշխութեան վրայ։

ԱՆՏՕՆ։ (Նայում է նրան սուր հայեացքով) Հերմէլի, դու այնպիսի եղանակով ես խօսում, որ կարծես նրա ասածների մէջ զգացել ես ակնարկ մեր մտախն։

ՀԵՐՄԵԼԻ։ Ով գիտէ, գուցէ և ակնարկեց։ Միթէ իրաւունք չունի։

ԱՆՏՕՆ։ Իրաւունք։ Եւ ալդ ասում ես դու։ Գոնէ իմ վերաբերմամբ ամեն մի ակնարկ կարող է անիրաւացն լինել։ Ես գոհ եմ իմ ընտանեկան վիճակով և եր-

ջանիկ, Երբ լիշում եմ իմ աննպատակ անցեալը և համեմատում ներկալի հետ, զարմանում եմ ինչու այն-չափ կոյր էի, որ տասը տարի առաջ չամուսնացալ։ Սակայն ինչ եմ ասում, այն ժամանակ դու չէիր լինե-իմ կինը, (Գրկում է Հերսէլուն), նստենք մի փոքր, ալսօր ես առանձին արամագրութիւն ունիմ քեզ հետ զրուցելու։

**ՀԵՐՍԵԼԻ:** (Ազատուելով նրա գրկից) Թող ինձ, ես նստել չեմ ուզում։

**ԱՆՏՕՆ:** Երբ լիշում եմ, թէ ինչպիսի ջանքերով ու խորամանկութեամբ խլեցի քեզ տասնեակ փալուն երիտասարդների ձեռքից, երբ մտածում եմ, որ դու ալժմ իմն ես, ուղիղն ասած, չը գիտեմ ինչին վերագ-րեմ իմ բաղդը... (Համբուրում է)։

**ՀԵՐՍԵԼԻ:** (Դարձեալ ազատումլով նրա գրկից)։ Ասա ինդրեմ, շատ ես սիրում ինձ։

**ԱՆՏՕՆ:** Ի՞նչ, և դու դեռ հարցնում ես։ (Բըռ-նում է նրա ճնոները)։

**ՀԵՐՍԵԼԻ:** Եթէ ինձանից զրկուես, շատ կը վշտանաս։

**ԱՆՏՕՆ:** (Բաց թողնելով նրա ծեռները) Հերսէլի...։

**ՀԵՐՍԵԼԻ:** Ինձ թւում է, որ քո սէրը հիմնուած-է իորին եսամոլութեան վրալ, որ դու իմ մէջ սիրում ես ոչ ինձ, ալ քեզ, քո անձնական երջանկութիւնը։

**ԱՆՏՕՆ:** Զեմ հասկանում, այդ բնչ վերլուծու-թիւն է։ Մի՛թէ մարդ ու կնոջ եսերը կապուած չեն սերա կապով։

**ՀԵՐՍԵԼԻ:** Ասում են, բայց ես չը գիտեմ, չեմ զգացել-կը կամենալի միայն իմանալ, կարող ես ինձ սիրել քո եսից անկախ, հէնց այնպէս, սիրել ինչպէս մի օտարի...։

**ԱՆՏՕՆ:** Ինչպէս մի օտարի։ Ահա թէ ինչ։ Ասա ինդրեմ բնչ կարող է տալ ինձ ալդպիսի մի, ասենք, պղատօնական սէր։

**ՀԵՐՍԵԼԻ:** Նա կը տալ քեզ սիրուողի լարգանքը, պատկառանքը, անհուն երախտագիտութիւնը և ան-վերջ գովասանքները։

ԱՆՏՕՆ: Շատ ողորմելի մի վարձատրութիւն: Բայց ես դարձեալ չեմ հասկանում քո միտքը, Հերսէլի:

ՀԵՐՄԻԼԻ: (Մտազգաղ) Իմ միտքը... Իմ միտքը կապուած է իմ զգացումների հետ: Եթէ կարող ես թափանցիր սիրաս և հասկացիր... (Մօտենում է խորքի լրամուտին եւ նայում դէպի դուրս):

ԱՆՏՕՆ: (Մի քանի վայրկեան լուր նայում է նըրաւ ետեւից մոտատանջութեան մէջ) Աա, կարծես, մասմբ հասկանում եմ...

ՀԵՐՄԻԼԻ: Ալո, մասմբ և ալն էլ ալդպէս ուշ:

ԱՆՏՕՆ: Ուշ: Ոչ, ալդ ինձ լալանի է նոյն իսկ մեր ամուսնութեան առաջին օրից: Բայց ես կարծում էի, որ դու դեռ անչափահաս ես, կեանքը լաւ չես ճանաչում և չգիտես իսկապէս ինչ ասել է ամուսնական երջանկութիւն:

ՀԵՐՄԻԼԻ: Եւ լոյս ունէիր փոխադարձ սիրոլ փոխարէն ստանալ կեղծիք, ալո:

ԱՆՏՕՆ: Կեղծիք:

ՀԵՐՄԻԼԻ: Ալո, ալն կեղծիքը, որ տալիս են հարիւրեց իննըսուն ու իննը կանալք իրանց ամուսիններին: Դու կարծում էիր, որ տարիները կառաջացնեն սովորութիւն, իսկ սովորութեան զգացումը կը հաշտեցնի ինձ դրութեանս հետ: Դու մտածում էիր ալսպէս. Վթաղ եռ գայ իւր ներսում, փրփրի որքան կամենում է, ժամանակը կը հանդարտեցնի նրան և վերջ ի վերջոյ կը դարձնի իմ գերին:

ԱՆՏՕՆ: Գերին...

ՀԵՐՄԻԼԻ: Ալո, մէկն ալն ողորմելի էակներից, որոնք մի անդամ իրանց վիզը դնելով օրինական անհամերաշխ ամուսնութեան լծի տակ, մինչև մահ քառում են ալդ լուծը անբան անասնի պէս:

ԱՆՏՕՆ: Սխալում ես, ես ուրիշ կերպ եմ մտածել: Ես մտածել եմ ալսպէս. սէրը, ալսինքն իսկական ամուր սէրը, ձեռք է բերւում ոչ-միանգամից, ալլ համ-

բերութեամբ և յամառ հետամտութեամբ, ինչպէս աշխարհիս ամենաթանգագին բանը: Եւ ահա մեր ծանօթութեան առաջին օրից սկսած աշխատել եմ քայլ առ քայլ մօտենալ քո սրտին: Սիրել եմ քեզ հոգոյս ամբողջ ուժով, սիրել եմ ոչ միայն իբրև ամուսնու, այլ իբրև կեանքիս ընկերուհու, իբրև մարդու, ոչինչ չեմ խնալել քեզ համար, աշխատել իմ անվերջ զիջումներով ու բարութեամբ կոտրել քո սրտի սառուցը:

ՀԵՐՄԵԼԻ: Ալո, ճիշդ է, իմ վերաբերմամբ դու միշտ եղել ես ոչ միայն զիջող, բարեսիրտ ու սիրող, այլ և կուցէ վեհանձն: Բայց միթէ չես զգացել մի բան, այն է, որ քո ալդ բարութիւնը, սէրը ու վեհանձնութիւնը ինձ ճնշում են ինչպէս մի դառն անտանելի լոլծ: Միթէ չես զգացել, որ հեշտ չէ մի կնոջ համար ստանալ թէկուզ իւր օրինական ամուսնուց ամեն բան և փոխարէնը չը կարողանալ տալ ոչինչ, բացի սառնութիւնից և անտարբերութիւնից:

ԱՆՏՕՆ: Խոստովանում եմ, չեմ զգացել, որովհետեւ երբէք չէի կարող երևակալել, թէ մարդու արածները իւր օրինական կնոջ համար նրա կողմից պիտի ընդունուին իբրև երախտիք: Ներսէլի, մի քըքըիր քո հոգին ասեղի ծալրով, նայիր կեանքին հասարակ աչքերով և զսպիր քո վառուող երևակալութիւնը: Քեզանից է կախուած դարձնել մեր կեանքը կամ մի փշալի անապատ կամ ծաղկազարդ բուրաստան:

ՀԵՐՄԵԼԻ: Օօ, եթէ ինձանից լինէր կախուած, այսօր այս լեզուով չէի խօսիլ քեզ հետ: Բայց դժբախտաբար խելքս չի կարողանում խեղդել այժմեան զգացումներս և առաջացնել ուրիշ զգացումներ իմ սրտում:

ԱՆՏՕՆ: Ուրեմն ես երբէք չը պիտի արժանանամ քո փոխադարձ սիրոյն, երբէք...

ՀԵՐՄԵԼԻ: (Հռովթին: Կոտոմ է ինքն իւր հետ):  
Երբէք:

**ԱՆՏՕՆ:** (Գրգոռուելով): Հերսէլի՛:

**ՀԵՐՄԵԼԻ:** Մի ստիպիր այլ ևս կեղծել: Բաւական է որքան ես տանջուեցի կեղծելուց: Այժմ չեմ կալող, որովհետև այլ ևս ինձ համար պարզ է այն սարսափելի տարբերութիւնը, որ կալ իսկական կեանքի և բուսական գոյութեան մէջ:

**ԱՆՏՕՆ:** Այժմ: Հասկանում եմ: Գո ընկերուհուն տեսնելուց լետոր: Դու նախանձում ես նրան վիճակին, այնպէս չէ, դու նրան երջանիկ ես համարում, իսկ քեզ անբախտ, ալո՞: Հերոէլի, մի հաւատար ուրիշների բախտին: Նա կարող է խաբուսիկ լինել: Դժուար է թափանցել մարդկանց սիրառ:

**ՀԵՐՄԵԼԻ:** Ես աչքերով չեմ դատում, այլ հօգով:

**ԱՆՏՕՆ:** Կան հարիւրաւոր կանալք, Հերսէլի, որ քեզ են նախանձում: Հարցրու նրանց, և կասեն քեզ, որ կանանց մէջ ամենաերջանիկը դու ես:

**ՀԵՐՄԵԼԻ:** Այո, չեմ հերքում, ինձ համարում են երջանիկ, սակայն ալն կանալք են համարում, որոնք գիտեն իրանց հօգու ամայութիւնը մոռանալ լանուն իրանց ամուսնու հարստութեան, ոսկու ու ադամանդների, շքեղ արդուզարդերի և փայլուն կահ-կարասու:

**ԱՆՏՕՆ:** Իսկ դու... դու ուզում ես քո սրտի ամայութիւնը լեցնել աւելի... աւելի էական բանով, ալո՞... (Յուզում՝ է ու դողրում):

**ՀԵՐՄԵԼԻ:** (Վիրատորուած): Մի վիրաւորիր ինձ կսպածներով, ես քեզ ոչ մի առիթ չեմ տուել:

**ԱՆՏՕՆ:** Այո, մինչև ալժմ առիթ չես տուել, բայց թուում է ինձ, որ այսուհետև ուզում ես տալ:

**ՀԵՐՄԵԼԻ:** Ես չեմ կարող ալդ եղանակով խօսել քեզ հետ: (Քայլերն ուղղում է դէպի ննջարան):

**ԱՆՏՕՆ:** Ոչ, սպասիր: Այժմ հենց ալս լեզուով պիտի խօսեմ քեզ հետ: Բաւական է որքան համբերեցի, լուցի և տանջուեցի: Հերսէլի, զսպիր վառ երևակալու-

թիւնդ, ապա թէ ոչ նա կարող է քեզ անդունդ գլորել։  
ՀԵՐՍԵԼԻ, Թող գլորի, այլ ևս կեղծել չեմ ուզում  
և չեմ կարող։

ԱՆՏՕՆ։ Զես կարող, ուրեմն ես էլ չեմ կեղծել։  
Լսիր, մինչև ալսօր դու խոցոտել ես իմ ինքնասիրու-  
թիւնը, իմ առնական եսը, և ես քեզ ներել եմ ու լոել։  
Խսկ ալժմ, երբ ալդպիսի յանդգնութեամբ պարզում ես  
քո արհամարհանքը դէպի ինձ, ականջ դիր։ Ես կը շա-  
րունակեմ մի առ ժամանակ ևս քեզ հետ վարուել ալն-  
պէս, ինչպէս վարուել եմ մինչև ալժմ, սիրով, բարու-  
թեամբ և փաղաքշանքներով։ Բայց եթէ դու ալսուհե-  
տե էլ մնաս ալդպէս սառն, անտարբեր, եթէ ալսու-  
հետե էլ արհամարհես ինձ հոգոլդ խորքում, այն ժա-  
մանակ իմացիր, որ ես մի հասարակ դիւզացու որդի  
եմ և լեռնական։ Հասկաննում ես միտքս։

ՀԵՐՍԵԼԻ։ Հասկաննում եմ։ Դու կը դիմես քո հալ-  
րերի ու նախահալրերի միջոցին, կը դառնաս բռնակալ։

ԱՆՏՕՆ։ Ստիպուած կը լինիմ դառնալ։ Կինը կամ  
պիտի սիրէ իւր մարդուն կամ պիտի վախենալ նրանից։  
Ես քո մէջ չը կարողացայ սէր գրգռել, կը զարթեցնեմ  
երկիւղ և յարգանք... Ալդ գուցէ աւելի լաւ է։ (Ուզում է  
զնալ իւր առանձնասեակը)։

ԱՆՆԱ։ (Ներս է մտնում խորքի դռննրից)։ Ահա  
և ես... (Ժեսնելով Հերսէլով յուզուած ու զոնատ,  
կանգ է առնում դռննրի առջեւ զարմացած)։

ԱՆՏՕՆ։ Շարունակեցէք, տիկին, կրթել եմ կնոջը...  
(Անցնում է իւր առանձնասեակը)։

ԱՆՆԱ։ Հերսէլի, ինչ է պատահել։ Դու դողում ես։  
ՀԵՐՍԵԼԻ։ Ահ, մի հարցնիր։ (Հեկսկալով ընկղմուա-  
է քազկաթոռի վրայ)։

Վ Ա Ր Ա Գ Ո Ւ Ց Բ Ր։

(Վերջը միւս համարու ՞)